

Մոսկվան նախաձեռնում է հրադադար Լեռնային Ղարաբաղում

Ամայա վան Գենթ, 11.նոյեմբերի 2020 թ.

Հրադադար. Ադրբեջանը՝ ցնծության մեջ. Հայաստանը՝ գոյության խոր ճգնաժամի մեջ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղում պատերազմի բռնկումից ի վեր ծանր մարտերում զոհվել է ավելի քան հինգ հազար մարդ, իսկ շուրջ հարյուր հազար քաղաքացիներ դիմել են փախուստի: Նոյեմբերի 10-ից՝ Ռուսաստանի ժամանակով 00:00-ից զենքերը պետք է լռեն: Հայաստանը, Ադրբեջանը և Ռուսաստանն այդ մասին պայմանավորվել են լույս երեքշաբթի գիշերը: Ինը կետից բաղկացած համաձայնագիրը հակամարտության կողմերին հնարավորություն է տալիս փոխանակել իրենց ռազմագերիներին և հավաքել իրենց անհամար զոհերի դիերը, որոնք դեռ գտնվում են խրամատներում կամ բաց դաշտում: Համաձայնագիրը նախատեսում է նաև հայկական բոլոր զորամասերի դուրսբերում ադրբեջանական ադրբեջանից: Նրանց Լեռնային Ղարաբաղում պետք է փոխարինեն ռուս խաղաղապահ զորամասերը: Հրադադարն ունի հինգ տարվա տևողություն:

Մոսկվան և Բաքուն զգալիորեն գոհ են

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը փաստաթղթի ստորագրումից հետո ակնհայտորեն գոհ էր. լրատվամիջոցների հետ հանդիպման ժամանակ նա պարզաբանեց, որ հույս ունի՝ պատերազմական գործողությունների դադարեցման այդ համաձայնագիրը նաև «անհրաժեշտ պայմաններ կստեղծի Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի տևական և համապարփակ լուծման համար», և միաժամանակ հայտարարեց, որ արդեն շուրջ 2000 ռուս խաղաղապահներ ուղևորվել են Լեռնային Ղարաբաղ: Ռուսաստանի նախագահը գոհ լինելու բոլոր հիմքերն ունի. մասնավորապես նա այդ համաձայնագրով կարողացավ այդ հակամարտությունում նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել, խաղից դուրս թողնել Թուրքիային և առաջիկա հինգ տարիների ընթացքում բացառել լուծում գտնելու հարցում Արևմուտքի ցանկացած մասնակցություն:

Հրադադարն Ադրբեջանին զցել է հաղթանակի ցնծության մեջ: Ստորագրումից հետո մայրաքաղաք Բաքվում և այլ քաղաքներում հարյուրավոր քաղաքացիներ դուրս եկան փողոց և

աղմուկով ու հրճվանքով տոնեցին մինչ առավոտ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը համաձայնագիրն անվանեց «պատմական հաղթանակ» իր ազգի համար:

1991-1994 թթ. Ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում ավելի քան կես միլիոն ադրբեջանցիներ վտարվել էին Լեռնային Ղարաբաղի շրջակա յոթ շրջաններից: Երեսուն տարի անց նրանցից շատերը դեռ ապրում են փախստականների խղճուկ ճամբարներում, իսկ ոմանք նույնիսկ երագում են «հայրենիք» վերադառնալու մասին: Ադրբեջանական հեռուստատեսությամբ բազմիցս ցուցադրվել են նկարներ, թե ինչպես էին Պուտինը և «իրենց» նախագահը ստորագրում փաստաթղթերն ու այդպիսով իրականացնում իրենց երազանքը: ՀՀ կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը ներկա չէր ստորագրման արարողությանը: Իր ելույթում Ալիևն ինքնագոհ հայտարարեց, որ «Ադրբեջանի երկաթե բռունցքն» է ստիպել Փաշինյանին ստորագրել փաստաթուղթը, և որ նա դա բոլոր դեպքերում արել է ծածուկ՝ վախկոտի նման: Հզոր Ալիևը խորապես արհամարհում է իր հայ հակառակորդին և նրա ժողովրդավարական էքսպերիմենտը: Լույս երեքշաբթի գիշերը նա նույնիսկ փորձ չարեց՝ թաքցնելու այդ արհամարհանքը փաստաթղթի ստորագրումից հետո ակնհայտորեն պարտված հայ հակառակորդի նկատմամբ:

Ի՞նչ է ստուգապես ստորագրվել

Մինչև դեկտեմբերի վերջ Հայաստանը պետք է **ստանց** կռվի զիջի դեռ իր վերահսկողության տակ գտնվող՝ Ադրբեջանի նախկին շրջանները: Ըստ 6-րդ կետի՝ Քարվաճառի հանձնումը պետք է ավարտվի մինչև նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինին՝ մինչև դեկտեմբերի 1-ը: 1920-ական թթ. սկզբին Իոսիֆ Ստալինն այդ տարածքները բնակեցրել էր ադրբեջանցիներով ու քրդերով՝ Հայաստանի Հանրապետության և հայաբնակ Լեռնային Ղարաբաղի տարածքները մի հարվածով միմյանցից բաժանելու համար: Ղարաբաղյան առաջին պատերազմից հետո հազարավոր հայեր, որոնց մեծ մասը Ադրբեջանից տեղահանվածներ են, այդտեղ նոր կյանք են սկսել: Հարցը, թե ի՞նչ է լինելու նրանց հետ, առայժմ մնում է անպատասխան: Լաչինի՝ կարևոր նշանակության միջանցքը, որը մինչև այժմ երաշխավորել է Մայր Հայաստանից առանձնացված Լեռնային Ղարաբաղի գոյությունը, այսուհետև վերահսկվելու է ռուսական զորքերի կողմից: Ամեն դեպքում, երկկողմանի տրանսպորտային հաղորդակցությունը պետք է թույլատրվի Ադրբեջանի կողմից: Այնուհետև ամենաուշը մինչև նոյեմբերի վերջը հայերը պետք է հանձնեն Ադդամի՝ հարավային շրջանը (2-րդ կետ) և ադրբեջանցի փախստականներին վերադառնելու հնարավորություն տան՝ ՄԱԿ-ի փախստականների հանձնաժողովի վերահսկողության ներքո:

Թուրքիայի համար անակնկալ միջանցքի բացում

Հաղթական տրամադրություն է նաև Թուրքիայում: Թուրքիայի փոխնախագահ Ֆուաթ Օքթայը կարգադրեց «Ղարաբաղն այժմ Ադրբեջան է» ավետիսը տարածել սոցիալական կայքերում, նաև՝ «Ձեր ուրախությունը, մեր ուրախությունը պետք է հավերժ լինեն, Ադրբեջան»:

Իրականում Թուրքիայի եռանդուն միջամտությունն է վտանգավոր կերպով փոխել ուժերի հավասարակշռությունը Հարավային Կովկասում՝ հոգուտ Ադրբեջանի: Թուրք սպաները, թուրքական անօդաչու թռչող սարքերը և Միրիայից ժամանած ջիհադիստ զինվորները, որոնց վարձել էր Թուրքիայի նախագահը, վեց շաբաթ շարունակ ուղարկվում էին ռազմաճակատ՝ վերականգնելու Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունը»: Դրա համար Թուրքիան անակնկալ պարզևատրվեց՝ ստանալով «միջանցք» Հայաստանի տարածքով: Համաձայնագրի 9-րդ կետը պարտավորեցնում է Հայաստանին «ապահովել քաղաքացիների, փոխադրամիջոցների և ապրանքների ազատ փոխադրումն Ադրբեջանի և նրա արևմտյան անկլավ Նախիջևանի միջև՝ հայկական Ջանգեզուրում բացված միջանցքով»: Հայաստանի համար դա փաստացի նշանակում է, որ Նախիջևանի հետ ընդհանուր սահման ունեցող Թուրքիան այդպիսով նաև ազատ մուտք է ստանում դեպի Կենտրոնական Ասիայի թուրքալեզու հանրապետություններ:

Այդ «միջանցքի» աշխարհաքաղաքական-ռազմավարական նշանակությունը չի կարող թերագնահատվել. Խորհրդային միության փլուզումից ի վեր Թուրքիան երազում էր ցամաքային ճանապարհով ազատ մուտք ունենալ դեպի առասպելական հարստություններ ունեցող և մշակութով իր հետ կապված՝ Կենտրոնական Ասիայի հանրապետություններ: Ջանգեզուրի հայկական նեղ միջանցքը, որը գտնվում է Նախիջևանի և Ադրբեջանի միջև, ամեն դեպքում խոչընդոտում էր Անկարայի՝ այդ տարածաշրջանում ավելի մեծ ազդեցություն ունենալու բոլոր երազանքներին: 9-րդ հոդվածը Հայաստանից պահանջում է երաշխավորել Նախիջևանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև ապրանքափոխադրումներն իր տարածքով: Անհասկանալի է, թե ինչու՞ է Մոսկվան Անկարային այդ կարևոր միջանցքի հնարավորությունը տվել:

Տոտալ կապիտուլյացիա

Մոսկվայի նախաձեռնած համաձայնագիրը ռումբի նման հարվածեց հայ հասարակությանը: Հայերը, անկախ իրենց գաղափարական կողմնորոշումից, այդ համաձայնագիրն ընկալում են՝ որպես իրենց երկրի նվաստացուցիչ կապիտուլյացիա: «Անձամբ ինձ ու մեր ժողովրդի համար տեքստն աննկարագրելի ցավոտ է», - ֆեյսբուքով տեղեկացրեց Հայաստանի կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը: Ըստ նրա, սակայն, երկար կշռադատելուց և իրավիճակը

վերլուծելուց հետո որոշել է ստորագրել այն: Արդյոք նա Բաքվի նպատակների առնչությամբ գերազնահատե՞լ էր իրեն, երբ պատերազմի բռնկումից հետո իր ժողովրդին կոչ արեց «դիմանալ թուրքերի կայծակնային պատերազմին» և շարունակել պայքարը, միևնույն (դեռևս) հայաբնակ Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Մայր Հայաստանում դժվար թե գտնվի մի ընտանիք, որը չի սգում մեկ կամ մի քանի զոհված հարազատի համար: Արդյոք Փաշինյանը Մոսկվայի կողմի՞ց հարկադրվեց կապիտուլյացիայի, թե՞ որովհետև Լեռնային Ղարաբաղի ամբողջ Շուշիի հայկական ճակատը փլուզվեց: Համընդհանուր հարգանք վայելող՝ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հայտարարեց, որ ինքը ո՛չ ռուսական, ո՛չ Հայաստանի կառավարության ղեկավարի կողմից չէր տեղեկացվել այդ՝ այնքան ծանրակշիռ համաձայնագրի մասին: Նա նաև ավելացրեց, որ ինքը դրա ստորագրության մասին միայն լրատվամիջոցներից է տեղեկացել: Նա ակնհայտորեն վրդովված էր:

Համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Հայաստանում անկարգություններ սկսվեցին: Լույս երեքշաբթի գիշերը մի ամբոխ գրավեց խորհրդարանի շենքը և գայրույթի մեջ կոտրեց կահույքը, դռներն ու պատուհանները, անարգեց կառավարության ղեկավարին՝ նրան անվանելով դավաճան և ծեծի ենթարկեց ԱԺ նախագահին, որին տեղափոխեցին հիվանդանոց: Հետզհետև ձևավորվում է մի ճամբար պահպանողական, Պուտինին հավատարիմ քաղաքական գործիչների գվարդիայի շուրջ, որոնք կառավարության ղեկավարին մեղադրում են՝ իր «անպատասխանատու, արևմտամետ քաղաքականությամբ» Մոսկվայի գայրույթը հարուցելու և դրանով ազգային նվաստացմանը հանգեցնելու մեջ: Այդ ճամբարը պահանջում է Փաշինյանի հրաժարականը՝ «այստեղ և հիմա»:

Կառավարությանը մոտ կանգնած ճամբարը նույնպես խոսում է «ակնհայտ դավաճանության» մասին, բայց առաջին հերթին նկատի ունի Մոսկվայի դավաճանությունը: Նրա համար ապացույց է ծառայում այն փաստը, որ Ռուսաստանը վեց շաբաթ ձեռնունայն հետևել է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող սպանդին՝ իր ռազմավարական գործընկեր Հայաստանին նույնիսկ խորհրդանշական աջակցություն չցուցաբերելով: «Նիկոլի» շուրջ ձևավորված այդ ճամբարը նոյեմբերի 10-ին ստորագրված համաձայնագիրը առաջին հերթին համարում է «պատիժ» այն բանի համար, որ այդ քաղաքական գործիչը 2018 թ. իր, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությամբ» մի կարճ ժամանակ գայթակղեց ժողովրդին՝ հեռավոր Կովկասի արմատական ժողովրդավարացման, կոռուպցիայի նվազման, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և իրավական պետության հույսեր ներշնչելով: Նրանք նաև կարծում են,

որ այդ կերպ Մոսկվան պատժի օրինակ է ցուցադրում՝ այլ երկրների, ինչպիսին Բելառուսն է, ազդանշան է ազդանշեղով, որ նրանց նույնը կսպառնա, եթե նրանք, ինչպես Հայաստանը, համարձակվեն ավելի շատ ժողովրդավարություն և անկախություն պահանջել: Արդյոք Նիկոլը կվերապրի՞ այդ համաձայնագիրը, պարզ չէ: Գալիք հուզումներից երկյուղն արդեն թևածում է: Համաձայնագիրն իրականում Հայաստանն նետել է խորը գոյութենական ճգնաժամի մեջ: **Պա** հետևանքներն առայժմ անկանխատեսելի են:

Հրապարակվել է INFOsperber կայքում, <https://www.infosperber.ch/politik/welt/moskau-initiiert-waffenruhe-in-bergkarabach/>